ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի հայութեան տագնապը ժանրակշիռ տարողութիւն ստացած է և դարձած՝ տագնապ ողջ հայութեան ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի։

Հայ ազգային-քաղաքական երեք կուսակցութիւններս սկիզբէն ի վեր սերտ հետեւողականութեամբ մեր ամենօրեայ մտահոգութեանց առարկայ ըրած ենք այս տագնապը և միասնական կեցուածքով մէկէ աւելի անգամներ համասփիւռքեան չափանիշով արտայայտած մեր ամբողջական և անվերապահ զօրակցութիւնը Ղարաբաղի և Հայաստանի ժողովուրդին և անոր արդար դատին, որուն վերջնական լուծումը կը նկատենք Լեռնային Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին։

Այսօր անգամ մը եւս միասնական այս յայտարարութեամբ կը յայտնենք մեր անտեղիտալի զօրակցութիւնը Ղարաբաղի և Հայաստանի մեր ժողովուրդին և պատկան պետական իշխանութեանց՝ իրենց միասնական, շարունակական և վճռական կեցուածքին մէջ արդար լուծման մը ի խնդիր։

Մեր սպասումն ու պահանջքը Խորհրդային Միութեան վերին պատասխանատու և պատկան մարմիններէն այն է, որ որպէս արդար մօտեցման դրական փաստ, հրապարակային դատավարութեան և համապատասխան պատիժներու ենթարկուին այն բոլոր անձերն ու խմբաւորումները, որոնք ոճրային արարքներ գործեցին ըլլա՛յ Սումկայիթի և ըլլա՛յ Ղարաբաղի մէջ։

Կը սպասենք որ խորհրդային մամուլը թէ՛ Մոսկուայի մէջ և թէ՛ Հայաստանի մէջ ճշգրիտ և ամբողջական անդրադարձում ունենայ, տեղեկատուական և թէ՛ մեկնաբանական տեսակէտէ, տեղի ունեցած դէպքերուն և արարքներուն մասին, ըստ խորհրդային վերին իշխանութեան կողմէ յայտարարուած և բոլորէն ողջունելի հրապարակայնութեան (կլասնոսթի) սկզբունքներուն և ոգիին։

Կը պահանջենք որ Խորհրդային Հայաստանի պետական իշխանութիւնները առաւել վճռակամութեամբ հարազատ թարգմանը հանդիսանալով համաժողովրդական իրաւացի պահանջքներուն, հետեւողական նախանձախնդրութեամբ և օրինական ու քաղաքական բոլոր միջոցներով Ղարաբաղի հարցը դարձնեն իրենց առաջնահերթ հարցը արդար և ամբողջական լուծման մը յանգելու առաջադրութեամբ, անգոհացուցիչ եւ՝ Ղարաբաղի ու Հայաստանի ժողովուրդի իրաւունքներու և ցանկութեան անհամապատասխան նկատելով ցարդ նախատեսուած միջոցառումները։

Կոչ կ'ուղղենք նաեւ, Ղարաբաղի և Հայաստանի մեր արի ժողովուրդին որ խուսափին այնպիսի ծայրայեղական կեցուածքներէ, ինչպէս՝ գործադուլներէ, դասադուլներէ և ծայրայեղական կարգ մը կոչերէ ու արտայայտութիւններէ, որոնք կը խանգարեն կարգն ու կանոնը մեր հայրենիքի հանրային կեանքին, ժանր կորուստներու կ'ենթարկեն մեր երկրի տնտեսական, արդիւնաբերական, կրթական, մշակութային կեանքը և նաեւ վնաս կը բերեն մեր ժողովուրդի վարկին ինչպէս նաեւ բնականոն յարաբերութիւններուն ըլլա՛յ խորհրդային վերին իշխանութեանց, ըլլա՛յ խորհըրդային միւս հանրապետութիւններուն հետ և կը ծառայեն մեր ժողովուրդի թշնամիներու յետին նպատակներուն։

Պէտք է ամէն բանէ վեր պահպանել մեր ժողովուրդի միութիւնը, որուն մէջ է մեր զօրութիւնը եւ՝ հեռատեսութեամբ ու վճռակամութեամբ հատապնդել մեր գերագոյն շահերը։

Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈ
Ռ.Ա.Կ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ